

Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում կայացավ «Սիրիահայ փախստականների աջակցման և աշխատատեղերի ստեղծման նպատակով Երևանում խոհանոց- կենտրոնի ստեղծման» ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը

2018 թվականի նոյեմբերի 29-ին Երևանում կայացավ «Սիրիահայ փախստականների աջակցման և աշխատատեղերի ստեղծման նպատակով Երևանում խոհանոց-կենտրոնի ստեղծման» ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, ինչպես նաև «Հալեպ» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Սարգիս Բալիյանը, ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Սարգսյանը, Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսերը, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Գործերի ժամանակավոր հավատարմատար պարոն Ռաֆիկ Մանսուրը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցիչ տիկին Աննա-Կարին Օստը և այլ հյուրեր:

Ծրագրի նպատակն է ստեղծել բազմատեսակ սննդի ծառայություններ մատուցող եկամտաբեր ձեռնարկատիրություն՝ աշխատանք տրամադրելով գործազուրկ սիրիահայ փախստականներին, մասնավորապես թիրախավորելով կանանց, հաշմանդամություն ունեցող մարդկանց և սիրիական համայնքի այլ խոցելի անդամներին: Խոհանոց-կենտրոնի բնույթը առանձնահատուկ և ուշագրավ է այն առումով, որ ողջ շահույթը ուղղվելու է սիրիացի փախստականների և Հայաստանում բնակվող խոցելի խմբերի համար մարդասիրական օգնություն և աշխատանքի հնարավորություններ տրամադրելուն: Ծրագիրը մի քանի կողմերի համատեղ ջանքերի արդյունք է, այն իրականացվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացմամբ, շինության վերանորոգման հարցը ստանձնել է Ճապոնիայի կառավարությունը, *Գերմանիայի միջազգային համագործակցության* ընկերության կողմից տրամադրվել են սարքավորումներ, ինչպես նաև տեխնիկական վերապատրաստում ապագա աշխատակիցների համար, ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքի Սբ. Գևորգ հայ առաքելական եկեղեցու ծխական խորհուրդի ֆինանսական աջակցությամբ ձեռք է բերվել տարածքը, բացի այդ մի շարք գործընկերներ և աջակիցներ նպաստել են արևելյան խոհանոց-կենտրոնի ստեղծմանը:

Նշում՝ Համաձայն ՄԱԿ ՓԳՀ-ի և ՀՀ կառավարության՝ մոտ 22,000 հայկական ծագում ունեցող սիրիացի փախստականներ մուտք են գործել Հայաստան, երբ սկիզբ է առել սիրիական հակամարտությունը 2011 թվականին: Նրանցից՝ 15,000-ը դեռևս շարունակում են վերականգնել իրենց ապրուստը: Մեծամասնությունը քաղաքային փախստականներ են, որոնք ապրում են Երևանում և վերջինիս շրջակայքում, որտեղ նրանք առերեսվում են իրենց տնտեսական ինտեգրման և սոցիալական մեկուսացման հետ կապված խոչընդոտների:

Ծրագրի անունը՝ Սիրիահայ փախստականների աջակցման և աշխատատեղերի ստեղծման նպատակով Երևանում խոհանոց-կենտրոնի ստեղծման ծրագիր

Շահառու՝ «ՀԱԼԵՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն

Դրամաշնորհի չափը՝ 40,635 ԱՄՆ դոլար (4,469,850 ճապոնական յեն)

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ Մարտի 14, 2018

Կից կարող եք տեսնել այս իրադարձության մասին հոդվածներ այլ աղբյուրներում:

[News.am “Syrian Cuisine Center opens in Yerevan \(English\)”](#)

[Youtube: News.am Channel \(Armenian\)](#)

[Youtube: Aysor TV \(Armenian\)](#)



Դեսպան Յամադային ողջունում է «Հալեա» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Սարգիս Բալխյանը



«Հալեա» ՀԿ-ի հիմնադիր նախագահ տիկին Բալխյանի կողմից ողջույնի խոսք



ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Սարգսյանի ողջույնի խոսքը



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Գերմանիայի դեսպանի շնորհավորական խոսքը



ՄԱՓԳՀ ներկայացուցչի շնորհավորական խոսքը



Դեսպան Յամադայի կողմից հուշագիր



Դրամաշնորհային աջակցության վահանակներ



Սննդի ձեռնարկատիրության սկիզբը կենտրոնում